# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
# ՎԱՐԴԵՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Վարդենուտ
համայնք, ՀՀ Արագածոտնի մարզ, Վարդենուտ համայնք, 1-ին
փող, 35, Հեռ. 093663345 , kamo-sahakyan-60@mail.ru

N 52
*22 նոյեմբեր 2016թ.*

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԳԱԲՐԻԵԼ ԳՅՈԶԱԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

Ձեզ ենք ուղղարկում Վարդենուտ համայնքի ավագանու 10,11,2016թ-ի թիվ 30,31,32,33 որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՄՈ ՍԱՀԱԿՅԱՆ

*Կատ. ՝ Վ.Ծագոյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԵՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզ
Վարդենուտի համայնք, հասցե գ.Վարդենուտ, հեռ. 093-66-33-45

# ՈՐՈՇՈՒՄ

10 նոյեմբերի 2016թ. թիվ 30 որոշում

## ՎԱՐԴԵՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2017 Թ. ԲՅՈՒՋԵՅԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի և <<բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագիրը և խորհրդակցական մարմնի կողմից իրականացված հանրային լսումների արդյունքները

**Վարդենուտ համայնքի ավագանին որոշեց.**

Հաստատել Վարդենուտի համայնքապետարանի 2017թ. բյուջեն համաձայն հավելված 1-ի :

Ավագանու 5 անդամներն էլ մասնակցեցին քվեարկությանը:

Կողմ 5 Դեմ 0 Ձեռնպահ 0

1. Ա.Պետրոսյան
2. Ն.Սեդրակյան
3. Լ.Տերոյան
4. Է.Խալաթյան
5. Ռ.Հարությունյան

ՎԱՐԴԵՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԵՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզ
Վարդենուտի համայնք, հասցե գ.Վարդենուտ, հեռ. 093-66-33-45

## ՈՐՈՇՈՒՄ

10 նոյեմբերի 2016թ. թիվ 31 որոշում

## ՎԱՐԴԵՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017Թ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջով.
**Վարդենուտ համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել Վարդենուտ համայնքի ղեկավարի 2017թ. ամսական պաշտոնային դրույքաչափը,այն սահմանել 240.000 (երկու հարյուր քառասուն հազար) դրամ:

Ավագանու 5 անդամներն էլ մասնակցեցին քվեարկությանը:

Կողմ 5 Դեմ 0 Ձեռնպահ 0

1. Ա.Պետրոսյան
2. Ն.Սեդրակյան
3. Լ.Տերոյան
4. Է.Խալաթյան
5. Ռ. Հարությունյան

ՎԱՐԴԵՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.ՍԱՀԱԿՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԵՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզ
Վարդենուտի համայնք, հասցե գ.Վարդենուտ, հեռ. 093-66-33-45

# ՈՐՈՇՈՒՄ

10 նոյեմբերի 2016թ. թիվ 32 որոշում

### ՎԱՐԴԵՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2017Թ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի և «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով.
**Վարդենուտ համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել Վարդենուտի համայնքապետարանի աշխատակազմի 2017թ. աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելված 2-ի.

Ավագանու 5 անդամներն էլ մասնակցեցին քվեարկությանը:

Կողմ 5 Դեմ 0 Ձեռնպահ 0

1. Ա.Պետրոսյան
2. Ն.Սեդրակյան
3. Լ.Տերոյան
4. Է.Խալաթյան
5. Ռ.Հարությունյան

ՎԱՐԴԵՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված 2

Վարդենուտ համայնքի ավագանու

10.11.2016թ. թիվ 32 որոշման

Վարդենուտի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1.Աշխատակիցների թվաքանակը-9
2,Պաշտոնային դրույքաչափը-9

| Հ/հ | *Հաստիքի անվանումը* | 2017թ. | |
|---|---|---|---|
| | | Միավորը | Մեկ միավորի դրույքը |
| | | Գյուղապետարանի աշխատակազմ | |
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 240,000 |
| | Ընդամենը | 1 | 240,000 |
| | | Համայնքային ծառայության պաշտոններ | |
| 2 | Աշխատակազմի քարտուղար 1.2-1 | 1 | 160000 |
| 3 | Առաջատար մասնագետ 3.1-1 | 1 | 150,000 |
| 4 | Առաջատար մասնագետ 3.1-2 | 1 | 130,000 |
| 5 | Առաջատար մասնագետ 3.1-3 | 1 | 130,000 |
| | Ընդամենը | 4 | 570,000 |
| | | Տեխնիկական սպասարկող անձնակազմ | |
| 6 | Ակումբի վարիչ | 1 | 72752 |
| 7 | Գրադարանավար | 1 | 72752 |
| 8 | Հավաքարար պահակ | 1 | 77905 |
| 9 | Տրակտորիստ- բուլդոզերավար | 1 | 72752 |
| | Ընդամենը | 4 | 296,161 |
| | Ընդամենը համայնքում | 9 | 1,106,161 |

ՎԱՐԴԵՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ.ՍԱՀԱԿՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԵՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզ
Վարդենուտի համայնք, հասցե գ.Վարդենուտ, հեռ. 093-66-33-45

# ՈՐՈՇՈՒՄ

10 նոյեմբերի 2016թ. թիվ 33 որոշում

## ՎԱՐԴԵՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի և «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջներով.
**Վարդենուտ համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել Վարդենուտ համայնքի տարածքում 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելված 3-ի.

Ավագանու 5 անդամներն էլ մասնակցեցին քվեարկությանը:

Կողմ 5 Դեմ 0 Ձեռնպահ 0

1. Ա.Պետրոսյան
2. Ն.Սեդրակյան
3. Լ.Տերոյան
4. Է.Խալաթյան
5. Ռ.Հարությունյան

ՎԱՐԴԵՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված 3
ՀՀ Արագածոտնի մարզի Վարդենուտ
համայնքի ավագանու
2016 թ. նոյեմբերի 10-ի N 33 որոշման

## ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

**հիմնական օբյեկտների համար՝**

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 10000 դրամ.

բ) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 20000 դրամ,

**ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝**

ա) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 3000 դրամ,

**2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մինչև 10000 դրամ:**

**3. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝**

1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2000 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2000 դրամ:

**4. Համայնքի տարածքում՝**

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 500 դրամ.

բ) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150 000 դրամ:

ՎԱՐԴԵՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՍԱՀԱԿՅԱՆ